



## 58. ՇՈՒԱԾ ՆԻ ՄՆԵՍՈՂԸ ՎԱԽԵԼ ԶԻ

Մին շորան ծուվլեն դրաղեն վըեխճարը պեց ար թողալ, մհակը ծըեռքեն նի մտալ ծովը, ծուվլեն իրեսավը քյինամ ար: Մին օրիշ մարթ վըեր կյամ ա խտի տըեսնում, շուրանեն ասում ա.—Օզում ըմ ևս էլ նի մննըեմ, ճիրին իրեսավը քյինամ, վըեր վըենները ճիրին իրհանեն փըռնե, ճուրն էլ ինձ տակ շանե: Չորանը թա՝ մըտկավըտ չտ պենն անց լի կըցնես, վըեր անց կըցրեր, ճուրը տակ ա ըննական:

Տա նի յա մննում ծովը, շուրանեն ծեն տամ, հըրցնում, թա պա վըեր ճուրն օզե ինձ տակ անե, կըրցլական ը՞ս տուս օնընս: Ասելնը-բաստ ճուրը կըլխավն անց ա կենում, էտ մարթին խեխտում, ըսպանում:

